ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում կայացած արտագնա խորհրդակցության

26. 04. 2016թ. **ք.Սպիտակ**

Մասնակցում էին

Հ. Թադևոսյանը- ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Հ. Պապոյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Ղուբաթյանը -մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Ա.Սարգսյանը - ՀՀ Լոռու մարզպետի օգնական

Սևակ Ափուջանյան- ՓՄՁ ՋԱԿ-ի ծրագրերի ՀՀ Լոռու մարզի համակարգող

,,Գարանտ Աուդիտ,, - ընկերության աշխատակիցներ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի համայնքների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ու մ՝

1. Նորանշանակ փոխմարզպետի ներկայացում:
2. ՓՄՁ ՋԱԿ-ի ծրագրերի ներկայացում, համայնքների հետ համագործակցության հարցեր:
3. Սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ հարցեր:
4. Ջորահավաքի կազմակերպման և անցկացման վերաբերյալ հարցեր:

Ա ռ ա ջ ա ր կ վ ե ց

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին՝

ա/ Ակտիվ և ճիշտ համագործակցել ՓՄՁ ՋԱԿ-ի հետ, հետագա ծրագրերի կազմման և իրականացման նպատակով:

բ/ Ապահովել սեփական եկամուտների պլանային ցուցանիշների իրատեսական պլանավորումը և հավաքագրման ցուցանիշների կատարումը:

գ/ Սերմացուի, պարարտանյութի և դիզելային վառելանյութի ներկայացված հայտերի հիման վրա ապահովել համապատասխան վճարումներ և բացառել մատակարարման ժամկետների ուշացումները:

դ/ Քննարկել ,,Գարանտ Աուդիտ,, աուդիտորական ընկերության առաջարկությունները և օրենքով սահմանված կարգով ընթացք տալ վերջինիս հետ կնքված պայմանագրերին:

ե/ Զոհված զինծառայողների, վիրավորների և ռազմական գործողություններին մասնակից քաղաքացիների ընտանիքների օգնության հարցը պահել ամենօրյա ուշադրության կենտրոնում և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

Արձ. Ա.Սարգսյան
Հեռ. 0322/2- 35-68/